

ԳՐԱՆՈՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ս. Հ. ՍԱՐԴԱՐՅԱՆ «ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

«ՄԻՏՔ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ: ԵՐԵՎԱՆ, 1967 թ.

(Հայերեն լեզվով, ռուսերեն և անգլերեն ամփոփումներով)

«Միտք» հրատարակչությամբ լույս է տեսել Ս. Հ. Սարգսյանի մենագրական աշխատությունը, նվիրված նախնադարյան հասարակությանը Հայաստանում թեմային:

Այս մեծածավալ աշխատության հանդես գալն, անշուշտ, միայն գոհունակությամբ կարող է ընդունվել գիտության տարբեր բնագավառների աշխատողների և ընթերցող լայն հասարակչության կողմից: Ավելացնենք նաև, որ տեխնիկական տեսակետից գիրքը հրատարակվել է բարձրորակ, կարելի է ասել՝ շքեղ:

Ստորև մենք հավանություն չունենք գրախոսելու ամբողջ գիրքը: Ցանկանում ենք միայն բնագետի տեսանկյունով շոշափել մի շարք թեորոշումներ, որոնք տեղ են գտել գրքի առանձին հատվածներում: Իրանցից է երկրորդ բաժնի 3-րդ գլխի 4-րդ հատվածը, որի վերնագիրն է. «Վայրի հացահատիկները Հայաստանում» (էջ 127—130):

Իհարկե, նման աշխատությունում վայրի հացահատիկների հարցի շոշափելը ոչ միայն լավ է, այլև անհրաժեշտ: Հայկական բարձրավանդակում տարածված բնության կենդանի հուշարձանները՝ վայրի ցորենը, գարին ու աշոբան (տարեկան) շատ բան են ասում Հայաստանի մշակույթի մասին ընդհանրապես և երկրագործության վիճակի մասին՝ առանձնապես:

Հայաստանը Առաջավոր Ասիայի այն առանձնաշնորհ երկրներից մեկն է (եթե ոչ ամենակարևորը), որտեղից իրենց սկիզբն են առել մարդկության համար մեծագույն նշանակություն ունեցող այդ բույսերը և տարածվել ամբողջ աշխարհով մեկ: Այդ հարցի կապակցությամբ եղած փաստական նյութի կոնկրետ ու պարզ շարադրումը, անշուշտ, կբարձրացնի գրքի գիտական արժեքը: Ցավով պետք է նշել, որ դա հեղինակին չի հաջողվել:

Ս. Հ. Սարգսյանը, ցանկանալով շարադրվող նյութին գիտական տեսք տալ, նախ վկայակոչում է բազմաթիվ ստույգ աղբյուրներ և օգտագործում բույսերի լատինական անվանումները: Սակայն, ըստ երևույթին, նյութին բավականաչափ գիտակ չլինելու հետևանքով, նա տարբեր հարցեր շփոթել է միմյանց հետ, իսկ լատիներեն անվանումների ճշգրիտ վերարտադրումը և դրանց գործածության կանոնների անտեսումը տեղիք են տվել կոպիտ սխալներին:

Նկատի ունենալով, որ թեկուզ այդ հատվածում (էջ 127—130) անճշտությունները շատ են, ուստի բոլորը չենք նշի:

127-րդ էջի ձախ սյունակում գրված է «Հայաստանի նախալեռներում գտնված են վայրի ցորենի շատ տեսակներ», այնինչ դրանք ընդամենը 4-են, որոնցից երկուսը՝ միահատիկն ու երկհատիկը, որպես տեսակներ, ընդհանուր ձանաշում գտել են, մյուս երկուսին (միաբիստ միահատիկ և ուրարտու) շատ դեպքերում ինքնուրույն տեսակներ չեն համարվում, մոտցվում են միահատիկի մեջ: Այսպիսով 2-ը կամ թեկուզ 4-ը շատ չեն: Հեղինակը պարզապես ճիշտ չի օգտագործել սկզբնաղբյուրները, որտեղ խոսվում է ոչ թե շատ տեսակների, այլ տեսակի սահմաններում տարատեսակների ու ձևերի մեծ բազմազանության մասին:

Ճիշտ չէ նաև, որ վայրի «երկհատիկ ցորենը» լինում է սպիտակահատ և կարմրահատ (նույն էջ, աջ սյունակ): Հայաստանում, և ընդհանրապես, վայրի սպիտակահատ ցորեն գոյություն չունի, բոլոր տարատեսակներն ու ձևերը կարմրահատ են:

Գրքի 128-րդ էջի ձախ սյունակում կա այսպիսի միտք. «Վայրի միահատ կամ միաբիստ և երկհատ կամ երկբիստ փափուկ ցորենը (Sp. mutabile Thum.) պատկանում է gr. Spei

toide mutabilis Thum. ցորենի խմբին: Նախ՝ վայրի միահատր միայն միախառ չէ: Գոյություն ունեն միահատ և միաժամանակ միախառ, ինչպես նաև միահատ, բայց երկփստ տեսակներ, իսկ երկհատը, ճիշտ է՝ երկփստ է, բայց փափուկ ցորեն չէ: Փափուկ կամ սովորական ցորենը աշխարհում ամենալայն տարածում գտած մշակովի ցորենն է, որը վայրի չէ և երբեք էլ վայրի վիճակում չի եղել (ստեղծվել է մարդու կողմից): Ինչ վերաբերում է փակագծում եղած լատիներեն անվանը, ապա նրանում եղած տառափառները մի կողմ թողած, այն ոչ վայրի ցորենին է վերաբերում և ոչ էլ իսկական փափուկին: Բացի գրանից, Gr. speltoido-mutabilis Thum. ցորենի խումբը նույնպես վայրի չէ և վայրենիներն էլ այդ խմբի մեջ չեն մտնում:

Հեղինակը նշված անձնություններին ավելացնում է նորը. «Այս խմբին է պատկանում նաև կանաչ հատիկներով դաճած ցորենը, ինչպես նաև կոշտ հատիկներով գորշ, ծխագույն տեղաճարակային տեսակը» (նույն տեղում): Մանրամասնությունների մեջ չմտնելով, ասենք, որ ցորենի նման բնութագրի ունեցող տեսակներ չկան: Մ. Գ. Թումանյանը «Հայաստանի ցորենների գենոֆոնդը» աշխատության մեջ (որը և վկայակոչում է հեղինակը մեջ բերված տողերից հետո), նշում է ցորենի այն տեսակներն ու ձևերը, որոնք էնդեմիկ են Հայաստանի համար: Ս. Հ. Սարգսյանը կարծի է, որ դրանք բոլորը վայրի են և նույն խմբի մեջ էլ մտնում են:

Այդ նույն էջում կարգում ենք նաև՝ «Վայրի երկհատիկ (Aegilop Sob Aegilopoides, Tr. thaoudor Reut) և նրա մշտական ուղեկից միահատիկ ցորենները (Tr. aegilopoides bal) հանդիպում են նախալեռներում...»: Փակագծում բերված լատիներեն բառերից և ոչ մեկը վայրի երկհատիկ ցորենի անվան նմանությունն անգամ չունի: Aegilop-ը ըստ երևույթին, Aegilops բառն է, որը ցորենի ցեղին մոտ կանգնած մի ուրիշ բույսի՝ այծակի լատիներեն անվանումն է: Sob-ը թերևս sub մասնիկի աղավաղումը լինի, որը նշանակում է ենթա: Aegilopoides-ը միահատ ու միաբիստ վայրի ցորենի նախկին անվանման աղճատումն է, իսկ Tr. thaoudar Reut-ը վայրի միահատ, բայց երկփստ ցորենի անվանումն է:

Այդ նույն 128 էջի 1-ին սյունակի վերջում գրված է՝ «Վայրի միահատիկ ցորենը (Tr. persicum vav)...»: Փակագծում բերվածը նույնպես մշակովի ցորեն է, վայրի չէ: Այն հիմնականում մշակվում է լեռնային շրջաններում և վայրի ցորենների ոլորտում բացակայում է: Հեղինակն, ինչպես չի նկատել, որ նույն էջում ցորենի միևնույն տեսակին (վայրի միահատ) լատիներեն տարբեր անվանումներ է վերագրել:

Բաց թողնենք 128-րդ էջի երկրորդ սյունակը, որտեղ անձնություններ նույնքան շատ են, որքան առաջինում:

Անցնենք 129-րդ էջին: Առաջին սյունակի հենց առաջին տողում կա այսպիսի ենթավերնագիր՝ «Լոռու շրջանի վայրի ցորեն»: Անտեղյակ ընթերցողը կկարծի թե Լոռու շրջանում վայրի ցորեն է գտնվել: Ցավակից այն է, որ վկայակոչվում է ցորենի այնպիսի խոշոր գիտակ, ինչպիսին Մ. Գ. Թումանյանն էր. ահա թե ինչպես. «Վայրի միահատիկ Tr. monosocum»² և երկհատիկ ցորեն հայտնաբերել է Մ. Գ. Թումանյանը 1926 թ. Լոռու Դսեղ, Իքատ, Պարնիգեղ գյուղերում: Միահատիկ աղվամաղ կարմրահատ ցորեն գտնվել է Դսեղ գյուղում, երկու տեսակի կարմրահատ՝ Իքատ գյուղում և մեկ տեսակի Մեծ Պարնի գյուղում: Որպեսզի պարզ լինի, թե ինչը ինչի հետ է շփոթվել, բերենք Մ. Գ. Թումանյանի վկայակոչված աշխատությունից համապատասխան տեղը³:

„Культурная¹ же или сорно-полевая однозернянка Tr. monosocum обнаружена нами в 1926 г. во время полеводственного обследования в Северной Армении в целом ряде сел Лори-Памбакского уезда.

...Опушенная, краснокосая форма... обнаружена нами во всех 4 образцах полбы... из с. Дсех, в 2 образцах полбы из с. Икаат, и в одном образце из с. Мец Парии...“.

Այսպիսով, Ս. Հ. Սարգսյանը կարծի է, թե Լոռու հաճարը (полба) վայրի երկհատիկ ցորեն է, իսկ նրա խառնուրդում կա վայրի միահատիկ ցորեն: Այնուհետև կարմրահատիկ (краснокосая) նրա մոտ դարձել է կարմրահատ, Իքատ գյուղի հաճարի երկու նմուշները՝

¹ Պետք է լինի Tr. aegilopoides Bal. Գ. Ղ.

² Պետք է լինի monosocum: Գ. Ղ.

³ М. Г. Туманян, Избранные труды, Ереван, 1957 г., стр. 40.

⁴ Ընդգծումներն իմն են: Գ. Ղ.

«Երկու տեսակի կարմրախառն՝ Իբատ գյուղում» և Մեծ Պարնիի մեկ նմուշը՝ «Մեկ տեսակի Մեծ Պարնիի գյուղում»։ Քե ինչու նմուշն էլ տեսակ է դառել, դարձյալ անհասկանալի է։ Մի ուրիշ աշխատության մեջ Մ. Գ. Թումանյանը գրում է. «Հյուսիսային Հայաստանում մենք վայրի երկհատ և միահատ ցորեն չենք հայտնաբերել, չնայած միահատիկների մշակովի ձևերը var. Hornemanii կազմում են սովորական խոնորդ Փամբակի մի ամբողջ շարք գյուղերի՝ Իբատ, Դսեղ, Մեծ Պարնի և այլն, հաճարի — Tr. dicoccum Schrank. ցանքերում»։

Վայրի ցորենի բուսուտների հայտնաբերումը միշտ մեծ հետաքրքրություն է առաջացրել հետազոտողների շրջանում։ Նույն հետեանքը կարող է թողնել նաև այս նոր «հայտնագործումը»։ Ս. Հ. Սարգսյանի գրքի շքեղ հրատարակությունը հավատ կենեղնչի նրանում բերված փաստերի նկատմամբ։ Ինչու՞ սեփական անտեղյակության և սկզբնաղբյուրների սխալ օգտագործման հետեանքով թյուրիմացության մեջ ընկնեն մեր և արտասահմանում ապրող ընթերցողները (գիրքն անշուշտ տարածվելու է արտասահմանում)։

Այդ գրքի 129-րդ էջի 1-ին սյունակում կա այսպիսի նախադասություն. «Հայկական վայրի ցորենի մեջ կան սպիտակահատ, կարմրահատ, սևահատ, թմբկաձև հասկերով, թեփիկներով և հարթ թեփուկավոր ցորեններ»։ Այնինչ ոչ մի սպիտակահատ ու սևահատ վայրի ցորեն գոյություն չունի. հասկն ու հատիկը (սպիտակահասկ, սևահասկ) շփոթվել են միմյանց հետ, իսկ «թմբկաձև հասկը» և «թեփիկները» ուղղակի հասկիկային թեփուկների վրա եղած ելունդավոր կետերի անվան աղավաղումն է։ Այդ սյունակում կան և ուրիշ անճշտություններ։

129-րդ էջի առաջին սյունակի երկրորդ կեսը, ինչպես նաև երկրորդ սյունակը գրելիս հեղինակը վկայակոչում է Բ. Գարսանֆերյանին, բայց դարձյալ թույլ է տվել անճշտություններ։ Բ. Մ. Գարսանֆերյանը² գրել է՝

„Почти на всех участках постоянными спутниками диких пшениц являются виды рода *Aegilops*“.

Ս. Հ. Սարգսյանի գրքում այդ փաստը ձևակերպվել է այսպես.

«...Համարյա ամբողջ տեղամասում ուղեկցում է վայրի ցորենի բնորոշ *Aegilopoides* տեսակը»։ Այսպիսով, Այծակնի (*Aegilops*) ցեղի տեսակները դարձել են վայրի ցորենի բնորոշ (°) *Aegilopoides* տեսակ (°)։

Անունհետև Ս. Հ. Սարգսյանը նույն սյունակում (էջ 129) գրում է. «Վայրի ցորենի (*Tr. dicoccoides*) հայկական խմբի տեսակներից առաջինը նշված է 36 տարբերակ, որից 23-ը՝ Միկոյանի շրջանում։ Նույն շրջանում ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել է 28 տարատեսակ»։ Նախ նշենք, որ Հայաստանի և Նախիջևանի վայրի երկհատիկ ցորենի տարատեսակների թիվը հազիվ 10-ի է հասնում։ Եղեգնաձորի շրջանում հայտնաբերվել է ընդամենը 4-ը։ Որտեղից են վերցված այդ թվերը, կամ ինչպե՞ս հասկանալ 36 տարբերակը և 28 տարատեսակը։ Ժիշտ չէ նաև, որ «Գարսանֆերյանը նկարագրել է հետևյալ զուտ հայկական վայրի ցորենը՝ *Tr. aegilopoides* Bal.-ը»։ Այդ տեսակը զուտ հայկական չէ, բացի Հայաստանից, այն տարածված է շատ տեղերում։

Գրախոսվող հատվածի վերջին մասը, որին տրված է «Վայրի հաճար» ենթավերնագիրը (էջ 129—130), նույնպես լի է թյուրիմացություններով։

Հայտնի է, որ վայրի հաճարը՝ դա ինքնին վայրի ցորենն է, որի մասին հեղինակը վերևում «տեղեկությունները» տվել է։ Այլևս ինչի՞ մասին է խոսքը։ Պարզվում է, որ այստեղ էլ աշորան կամ տարեկանը (рожь) շփոթվել է հաճարի (полба) հետ։ Բայց, երբ «Վայրի հաճար» ենթավերնագիրը փոխում ենք «Վայրի տարեկան»-ով, գրությունը չի շտկվում, սխալները մնում են։ Հեղինակը գրում է՝ «1934 թ. Գարալագյազի բարձր չորային գոտում Մ. Թումանյանը հայտնաբերել է վայրի հաճարի (*S. vavilovi* Gross, *Tr. dicoccoides*) թփուտներ» (էջ 129—130)։ Փակագծում բերված լատինական անվանումներից առաջինը վերաբերվում է վայրի միամյա աշորային, որը նկարագրել է Ա. Գրոսսը, իսկ երկրորդը՝ վայրի երկհատ ցորենն է։ Այս երկուսն էլ միամյա են, իսկ Սարգսյանը գրում է «...այդ հացբույսը բազմամյա է...»։ Բացի դրանից, դրանք «թփուտներ» չեն կարող կազմել, չէ՞ որ թփուտները փայտացողուն բույսերի խմբակցությունն է, իսկ ցորենն ու աշորան խոտաբույսեր են։

¹ М. Г. Туманян, Ботанический состав диких пшениц Армении и условия их произрастания в природе. Труды по прикладной ботанике, генетике и селекции, серия V, № 2, 1934 г., стр. 244.

² Гарасефьян Барук — Дикие пшеницы Даралагеза. Труды АРМФАН СССР, серия бнл. 2, 1958 г., стр. 87. Биологический журнал Армении, XXI, № 3—7

Իսկությունն այն է, որ Մ. Թումանյանը 1934 թ. հայտնաբերել է վայրի աշորայի մի տեսակ, որն անվանել է *Secale Daralagesi Thum.*

Այս մասի մյուս տեղերում գրվածները ճիշտ կարելի է համարել, եթե ամենուրեք «հաճար» բառը փոխենք «աշորայով»-ով:

Քերություններով լի են նաև մեր մասնագիտությանն առնչվող երրորդ բաժնի երկրորդ գլխի այն հատվածները, որոնք վերնագրված են «1. Հողագործություն, Պեղածո հացահատիկներ»:
«2. Պտղաբուծություն» (էջ 230—236): 1-ին հատվածում, օրինակ, վիկերը (*Vicia*) դառել են բլունի տարբերակներ (^o), փափուկ ցորենը՝ միահատիկ (էջ 230):

Այս հատվածից իմանում ենք, որ Հայաստանում մշակութային և վայրի միահատիկ ցորենը հայտնաբերել է Պ. Պ. Ժուկովսկին 1923 թվականին (էջ 232): Պ. Մ. Ժուկովսկին Հայաստանում չի եղել: Մշակութային ցորենն նա չէր կարող «հայտնաբերել» 1923 թվականին, քանի որ սրանից շատ առաջ, օրինակ, Ուրարտացիները այն «հայտնաբերել» ու ցանել են, իսկ ինչ վերաբերում է վայրի միահատին, ապա Հայաստանում այն հայտնաբերել է Մ. Թումանյանը 1925 թվականին: Մյուս անճշտությունները մի կողմ թողնելով նշենք, որ երկրորդ հատվածը («Պտղաբուծություն», էջ 235—236) նույնպես զերծ չէ դրանցից:

Գյուղատնտեսական գիտությունների թեկնածու դոցենտ՝

Ստացվել է 19.I 1968 թ.

Պ. Ա. ՂԱՆԳԻԼՅԱՆ